ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (ապրիլ ամսվա վերջի դրությամբ)









2022թ. ապրիլի 30-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 282.3 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.3%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 6.2%-ով, իսկ 2020 թվականի ապրիլի 30-ի նկատմամբ աճելով 20.6%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 61.7 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.5%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 5.8%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ աճելով 22.6%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 220.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.4%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ նվազելով 14.4%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ նվազելով 7%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 447.9 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.4%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 7.7%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 27.6%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8 մլրդ 961.2 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.2%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 8.3%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 29.7%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 486.7 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.3%-ով, նվազելով 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 1.7%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 1.6%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 741.1 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.8%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 15.7%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ աճելով 9.8%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 320.7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.7%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 25%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 61.7%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 220.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.4%-ով, նվազելով 2021թ. ապրիլի30-ի նկատմամբ՝ 14.4%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 7%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 47.5 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.3%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 3.2%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ աճելով 16.2%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 2 մլրդ 913,7 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 13.1%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 43.6%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 71.1%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 486.7 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.3%-ով, նվազելով 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 1.7%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 1.6%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 363.8 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.6%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 4.9%-ով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի նկատմամբ աճելով 3.1%-ով:

2022թ. ապրիլի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 78.54%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.16 տոկոսային կետով, 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշից՝ 1.09 տոկոսային կետով, 2020թ. ապրիլի 30-ի ցուցանիշից՝ 3.29 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.13%, ինչը պակաս է 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.12 տոկոսային կետով, 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ՝ 1.0 տոկոսային կետով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի համեմատությամբ՝ 3.17 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.33%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.04 տոկոսային կետով, 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշից՝ 0.09 տոկոսային կետով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի ցուցանիշից՝ 0.12 տոկոսային կետով:

2022թ. հունվար-ապրիլի ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 87.9 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 11.06 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 20.07 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 60.15 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7.39 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 19.57 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 27.75 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3.68 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 0.51 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2022թ. հունվար-ապրիլի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 66.49 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 340.46 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 8.65 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 54.52 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.25 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ՝ 21.71 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 11.97 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 340.28 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 30.36 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվար-ապրիլին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 15.56 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 12.3%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 41.3%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 69.16 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 3.3%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2.4%-ով,

3) ստացվել են 93.42 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 334.1%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 194.5%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 84.72 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 5.1%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 13%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2022թ. ապրիլի 30-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 281.9 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. ապրիլի 30-ի և 2020թ. ապրիլի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 73, 275.7 և 529.3 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3766 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է 5 օրով, 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ պակաս է 477 օրով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի համեմատությամբ պակաս է 473 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 5.0%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.32 տոկոսային կետով, 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ ավել է 0.74 տոկոսային կետով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի համեմատությամբ ավել է 0.18 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.3%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.1 տոկոսային կետով, 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ մեծ է է 0.19 տոկոսային կետով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի համեմատությամբ մեծ է 0.2 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 9.42%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. ապրիլի 30-ի և 2020թ. ապրիլի 30-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.31, 3.88 և 3.4 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 89.28%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. ապրիլի 30-ի և 2020թ. ապրիլի 30-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.41, 3.67 և 3.59 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. ապրիլ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարտատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 8.32 տարի: Այս ցուցանիշը 2021թ. ապրիլի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.6 տարով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի ցուցանիշից՝ 0.97 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 10.05%, որը 2021թ. ապրիլի 30-ի և 2020թ. ապրիլի 30-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 2.4 և 3.39 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 82.76%, լողացող տոկոսադրույքով՝ 17.24%: Ընդ որում, 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշից ավել է 0.6 տոկոսային կետով, իսկ 2020թ. ապրիլի 30-ի ցուցանիշից պակաս է 1.3 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 67.49%, ներքին պարտք՝ 32.51%: Ընդ որում, 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021թ. ապրիլի 30-ի և 2020թ. ապրիլի 30-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 7.99 և 7.86 տոկոսային կետերով: